ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԴՍԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ N 24

«29» մայիսի 2019 թ.

ՀՈՂԱՄԱՍԻՑ ՄԻԱՎՈՐԻ ԱՌԱՆՁՆԵՑՄԱՆ, ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, ՀՀ հողային օրենսգրքի 5-րդ հոդվածի 5-րդ կետով, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2394-Ն որոշումով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հաստատել ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2394-Ն որոշումով /հավելված 5/ Դսեղ համայնքին համայնքային սեփականություն փոխանցված 06-035-0127-0002 ծածկագրով գյուղատնտեսական այլ հողատեսքից առանձնացված 0.17694 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքի սահմանները համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:
2.Դիմել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում, սույն որոշմից ծագող իրավունքների պետական գրանցում կատարելու և համայնքային սեփականության իրավունքի վկայական տրամադրելու համար:

Համայնքի ղեկավար Գ.Հովսեփյան